ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
Վարկի համարը՝ P148836
Առաջադրանքի անվանում՝ Առաջադրանք 1. AFT-TV-05 ՀՀ Տավուշի մարզի «Խաշթառակի մանկապարտեզի հիմնանորոգման» ընթացքում տեխնիկական հսկողություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ AFT-TS-08

20 հունիսի 2023թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկ է ստացել Համաշխարհային Բանկից (ՀԲ) Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների իրականացման համար:
Տեխնիկական հսկողությունը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի հիման վրա: Տեխնիկական հսկողության հիմնական խնդիրներն են՝ ապահովել շինվերանորոգման աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության մասին օրենքներին, իրականացվող շինարարական աշխատանքների համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին (ԲՍԿՊ) և Վերաբնակեցման գործողությունների ծրագրերին (ՎԳԾ, եթե այդպիսին առկա է):

Խորհրդատուի աշխատանքների շրջանակը՝

1. Վերահսկել շինարարական աշխատանքների գործընթացը , վերահսկել և ստուգել նշահարման աշխատանքները, շինարարության ընթացքում ստուգել և չափագրել գեոդեզիական նիշերը:
2. Պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին:
3. Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և, նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպելով համապատասխան ակտերով
4. Կապալառուի կողմից վարվող շինարարության ընդհանուր մատյանում նշել նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները:
5. Մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:
6. Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:
7. Ստորագրել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունումը, ինչպես նաև ակտով նրանց հանձնմանը ԻԿ-ին՝ նշելով օբյեկտների տեխնիկական վիճակը:

8. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:
9. Վարել շինարարության ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը:
10. ՆԽ-ի (նախաձեռնող խումբ) և կապալառուի հետ համատեղ կազմել և վավերացնել ծածկվող աշխատանքների ընդունման ակտերը:
11. Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:
12. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:
13. Նշված ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:
14. Շենքերի և կառույցների եւ ծրագրի բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:
15. Խորհրդատուն պետք է ապահովի, որպեսզի ՀՏՋՀ-ն իրազեկված լինի շինարարության ընթացքում ցանկացած չնախատեսված հողօգտագործման մասին:
16. Ձեռնարկել գործողությունների ամենօրյա դաշտային մոնիտորինգ ՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններին (ԲՍԿՊ)՝ ներառյալ բողոքների լուծման մեխանիզմի կիրառումը, և պատրաստել մոնիտորինգի ամսական հաշվետվություններ ՝շինհրապարակներից օժանդակ լուսանկարներով և տեսանյութերով:
17. Իրականացնել ԲՍԿՊ-ին համապատասխան Գործառնական Առողջության և Անվտանգության (ԳԱԱ) միջոցառումների իրականացման հսկողություն շինարարական հրապարակում:
18. 24 ժամվա ընթացքում պատվիրատուին տեղեկացնել ծրագրի հետ կապված ցանկացած պատահարի կամ վթարի մասին, որը ազդել է Ծրագրի վրա, և որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, բնակչության կամ աշխատողների վրա, օրինակ ՝ աշխատանքային պատահարներ, որոնք կարող են հանգեցնել լուրջ վնասվածքների կամ տրանսպորտային պատահարներ և այլն:

Խորհրդատուի հետ կկնքվի ժամանակի վրա հիմնված պայմանագիր:
Ծառայությունները կմատուցվեն շինարարական ծրագրի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև աշխատանքների ավարտը՝ նախատեսվում է

Հ/Հ	*Անվանումը*	*Բնապահպանի առկայությունը*	*Տևողությունը օր*
1	**<u>Առաջադրանք 1. AFT-TV-05</u> ՀՀ Տավուշի մարզի «Խաշթառակի մանկապարտեզի հիմնանորոգում»**	***Այո***	***270***

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր:
Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ցույց տան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշներն են.

1. ***Կազմակերպության ընդհանուր փորձառությունը՝ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն հաջողությամբ ավարտած պայմանագրեր***

2. ***Կազմակերպության հատուկ փորձառությունը՝ հասարակական շենքերի կառուցման, վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության հաջողությամբ ավարտած պայմանագրեր (յուրաքանչյուրը՝ առնվազն 2,500,000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով)***
3. ***Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար***

<u>Խորհրդատուն պետք է ունենա շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության լիզենզիա (հավելվածներով) հետևյալ բնագավառներում.</u>

- ✓ Բնակելի, հասարակական և արտադրական

Հիմնական փորձագետները չեն գնահատվի կարճ ցուցակում ընդգրկվելու փուլում:
Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի՝ **"Գնումների Կանոնակարգեր Ներդրումային Ծրագրերի Ֆինանսավորման (IPF) փոխառուների համար, Հուլիս 2016, փոփոխված Նոյեմբեր 2017թ, Օգոստոս 2018թ" («Գնումների կանոնակարգեր»), բաժին III, պարբերություններ 3.14, 3.16 և 3.17-ին վրա,** որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի **«Գնումների կանոնակարգեր»-ի** "Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն" ընթացակարգի համաձայն:
Շահագրգիռ խորհրդատուները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.17:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով, ոչ ուշ քան **2023թ. հուլիսի 4-ը, ժամը 17:00-ը:**
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Գնումների բաժին
Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 405 սենյակ
Էլ-փոստ՝ procurement@atdf.am
Հեռ: (+374 60) 501 560 +510